բակները, որոնց աւերակները տեսնւում են այդ կողմում՝ այդ քաղաքի մասն էին կազմում։ Այդ կարող է ճշմարիտ լինել, որովհետեւ Պարսից պատմագիրները հաւատացնում են, որ Սուլթանիյէն տէրութեան ամենամեծ մայրաքաղաքն էր, եւ աշխարհում շատ քիչ քաղաքներ կան, որոնք այդքան շատ աւերակներ ունենան։

"Պարսկաստանի պատմագրներից ոմանք ասում են, որ այդ քաղաքը Պարթեւների ամենահին քաղաքներից մինն է, եւ նրա հիմնադիրն անյայտ է։ Ուրիշներն ասում են ընդհակառակն՝ որ առաջին հիմքն ձգուեց Ռաւիժի իշխանութեան ժամանակ, Երգօն Խանի հրամանով եւ թագաւորութեան ժամանակ, որ Հալաքու Խանի թոռն էր, եւ որովհետեւ քաղաքի շինութիւնը չվերջացաւ նրա կենդանութեամբ, նրա որդի Եանգու Սուլթանն աւարտեց շինութիւնը ԺԴ. դարի սկզբում, եւ կոչեց Սուլթանիյէ, այսինքն արքայական քաղաք։ Սակայն ես լսեցի շատ տեղեակ անձերից, որ այդ քաղաքը Սուլթանիյէ անունն սկսել է կրել միայն այն օրից՝ երբ Պարսկաստանի վերջին թագաւորները, որոնք նոյնպէս Սուլթան էին կոչւում, իրանց բնակութիւնը հաստատեցին այդտեղ։ Շահաբբաս Մեծն փոխադրեց մայրաքաղաքն այդ տեղից Սպահան ԺԶ. դարի վերջում։

"Եւրոպայի այժմեան մի քանի հեղինակներ համարձակ կերպով պնդում են, որ Սուլթանիյէն կառուցուել է Տիգրանակերտի աւերակներից. եթէ այդ ճիշդ է, ուրեմն կարելի է ասել, որ այժմեան անունը կազմուել է իր հին անունից. կերտ՝ հին պարսկերէն նշանակում է քաղաք. Տիգրանակերտ նշանակում է Տիգրանի քաղաք, որն, ինչպէս ամէն մարդ գիտէ, Հայաստանի թագաւոր էր։ Սակայն ես չգիտեմ, ինչպէս Սուլթանիյէն կարելի է Տիգրանակերտի տեղ ընդունել. Տակիտոսը ասում է, որ